

պատուարը հարթած ու քանդած սեպուիլ, հուսկ ուրեմն յաջողութեան մէջ ձգեց ճարտար եղանակաւ մը, թէ պէտ 'ի սկզբան շատ հակառակութիւն կրեց: Վերոյիշեալ Գաղղիական ընկերութեան առած թոյլտուութեանցը վրայ աւելցուց նաև անդր քան զԱլպիս Բիէմննդի մասին երկաթուղիներն ալ մինչև 'ի Պուֆփարուլա Դիշինոյի վրայ: Բիէմննդ, որ վրէժիննդիր էր աղատութեան, և իւր երկաթուղիները իրեն պատերազմական զործոց ամենօգտակար սեպեր էր, տեսնելով որ յանկարծ օտարոտի ընկերութիւն մը ընդարձակ մատակարարութեան տէր, խորհրդոց ատեանը 'ի Բարիլ հաստատած, բոլոր Սարտենիական պետութեան մէջ ծայր 'ի ծայրէ կը տարածուէր, Գիւլոզ կիրճէն սկսած, որ Գաղղիացւոց ձեռքն էր 'ի սահմանազլուխն, մինչև աւստրիական բերդորէից թնդանօթներուն տակ, վեր 'ի վայր շփոթեալ խոռվեցաւ ահազին սարսափէ և սոսկալի կասկածէ բոնուած: Այն ատենն էր որ Գավուրիւր բովանդակիշխանութեան ոյժը և սաստկութիւնը 'ի գործ զնելու բռնադատեցաւ այս կարգաւորութիւնը ընդունելի ընել տալու համար: Բայց միանդամայն ինքն իրածնին ալ իրեն ընդունել տալու համար՝ թերևս պէտք եղաւ նախ ուրիշ մէկ կէտ մը զիտել, որ ծածկուած էր հասարակաց տեսութենէ. այն է՝ Գաղղիոյ աղգապետին ծածուկ զիտաւորութիւնները. և իրաք այս կարգաւորութիւնը, որով մի և նոյն ընկերութեան ձեռքը կը յանձնուէին Գաղղիոյ սահմանազլուխն սկսած մինչև 'ի Սոլֆէրինոյ և 'ի Մաճէնդա գացող մեծամեծ ճամբանները, 1857-ին կատարուեցաւ ընդմէջ Բարիզեան ժողովոյն և 'ի Բլումպիէռ Գավուրի ընդ Նաբուէն կայսեր ըրած տեսութեանը:

Ինչ որ ուրեմն կը զիտէր Գավուր Ալտեանց ծակելուն նկատմամբ՝ յաջողեցաւ, առանց հասարակաց միագր եղածին խելահաս ըլլալու: Ընկերութիւնը յետ միանդամ Ալպեանց երկու կողման ճամբանները ձեռք բերելու, այնու-


հետեւ ինքն իրմէ յորդորուած վառուեցաւ այդ մեծ պատուարն ալ հարթել, որ իրեն ճամբան երկու կը կտրէր. ուստի և պետութեան հետ գաշնակցեցաւ որ 20 միլիոն ֆրանք դնէ իր կողմանէ Ալպեանց զունելը բացուելուն: Այսպէս 1857-ին մայիսի 14-ին չնորհեալ թոյլտութեամբն, որ և 'ի 29 յունիս ամսոյ նորին տարւոյ յօրէնս գրեցաւ, Ալպեանց ծակելուն խնդիրը դրամական մասին կողմանէ լուծուեցաւ: — Պետութիւնը այս մեծ ձեռնարկութեանը համար հարկաւոր քաղաքագիտական և մատակարարական միջոցները 'ի գործ դնելով, կը մնար այնուհետեւ գիտութեան և գիտոյ հանճարոյն՝ որ սկսած գործը յառաջ վարէ և աւարտէ:

Կը շարունակուի:

## ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

### ԱՄԵՐԻԿԱ

Պրազիլի բնակիչներէն են Պողոգուաք ըստածները: Այլ և այլ ցեղ կը բաժնուի Պրազիլի ժողովուրդը, որ բոլորը մէկէն վեց կամ եօթը միլիոնի չափ կը սեպուին. որոնց մէջ Ապիտակները քիչուր են, որոնք աւելի եւրոպացիք են և Գրէոլք. սեերը երկու կը բաժնուին՝ Խափիկի և Հնդիկ. ասոնցմէ ալ խառնուրդները տեսակ տեսակ անուններ ունին. ինչպէս Մամէլուգոս կ'ըսուին Հնդիկի և Սպիտակի խառնուրդները, Քաքուզոս՝ Հնդիկի և Խափիկի: Քրիստոնեայ Հնդիկները երկրագործութիւն կ'ընեն: Կան աղատ Հընդիկներ ալ որ գունդ գունդ անտառ-



Մաքուրունաս ի Պրազիլ,



Պոդոգուտք .

Ներու մէջ և անմատոյց տեղեր կը բնաւ | Մէջերնին կան մարդակերներ ալ: Ընդ-  
կին, որսով և ձկնորսութեամբ կ'ապրին: | Հանրապէս ուժով են և հասակաւ պըզ-



Հնդիկ կաքաւիչ ի Գալիֆորնիա .

տիկ , որկրամոլ են , բայց անօթութեան | ցեղերը կը կոչուին Պողոգուսք , Բու-  
ալ կը դիմանան : Ասոնց ալ այլ և այլ | ըիս , Բաղազոս և Գամադան :